ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Հ Ր Ա Մ Ա Ն

« 13 » փետրվարի 202 0 թ.

№ 057-ՂԶ

ՀՌԻՓՍԻՄԵ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ ՊԱՇՏՈՆԻ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 16-րդ մասը, 16-րդ հոդվածի 4-րդ մասը, ինչպես նաև հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի իրավաբանական և լիցենզավորման վարչության պետի (ծածկագիր՝ 43-34.1-Ղ3-1) թափուր պաշտոնն զբաղեցնելու համար մրցութային հանձնաժողովի 2020 թվականի փետրվարի 13-ի եզրակացությունը և Հռիփսիմե Ղազարյանի դիմումը՝ **հ ր ա մ ա յ ու մ եմ.**

1.Հռիփսիմե Ղազարյանին 2020 թվականի փետրվարի 14-ից նշանակել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի իրավաբանական և լիցենզավորման վարչության պետի (ծածկագիր՝ 43-34.1-Ղ3-1) պաշտոնում:

2.Հիմնական աշխատավարձը՝ համաձայն 2013 թվականի դեկտեմբերի 12-ի «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում Հռիփսիմե Ղազարյանին օրենքով սահմանված կարգով իրազեկելու պահից:

Գ.Բաղրամյան